ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ԱԺՔԱՐՈՅՇՈՒՄ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 93 - 94 (16182) ՇԱԲԱԹ, 23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2013 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ԳՈՐԾԱԴԻՐ

ՀԶՈՐ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

ՆՈՐ ՎԱՐՉԱՊԵՏ ԵՎ ՀԻՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐ

Նոյեմբերի 20-ին Վրաստանի խորհրդարանը ծեռնամուխ եղավ Վրաստանի նոր կառավարության գործունեության ծրագրի քննարկմանն ու կառավարության նոր կազմի հաստատմանը:

Կառավարության գործունեության ծրագիրը պատգամավորների քննարկմանը ներկայացրեց Վրաստանի վարչապետի թեկնածու Իրակլի Ղարիբաշվիլին:

Վարչապետի թեկնածուն իր ելույթն սկսեց Բիձինա Իվանիշվիլու հասցեին երախտիքի խոսքերով եւ նրան հաջողություններ մաղթեց հասարակական գործունեությունում: «Բիձինա Իվանիշվիլին կարեւոր դեր կատարեց վրաց քաղաքականության մեջ: Նա կատարեց իր խոսքը, ազատագրեց Վրաստանը եւ հեռացավ քաղաքականությունից: «Վրացական երազանք» կոալիցիայի կողմից ցանկանում եմ խորին շնորհակալություն հայտնել Բիձինա Իվանիշվիլուն եւ նրան մաղթել արգասաբեր հասարակական գործունեություն եւ համոզված եմ, որ նա ոչ նվազ ծառայություն կմատուցի երկրին»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Անդրադառնալով կառավարության գործունեության ծրագրին, վարչապետի թեկնածուն նշեց, որ նոր

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻՆ ՍՏՈՐԱԳՐԵՑ ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼՈՒՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, նոյեմբերի 20-ի ուշ երեկոյան, ստորագրեց Իրակլի Ղարիբաշվիլուն Վրաստանի վարչապետ նշանակելու մասին հրամանագիրը՝ հիմք ընդունելով վստահության այն քվեն, որը խորհրդարանը հայտնել է նախարարների նոր կաբինետին եւ կառավարության ծրագրին:

Գիորգի Մարգվելաշվիլին նոր վարչապետին եւ կառավարությանը շնորհավորեց աշխատանքն սկսելու կապակցությամբ:

«Շնորհավորում եմ վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլուն եւ Վրաստանի նոր կառավարության բոլոր անդամներին այն մեծ վստահության կապակցությամբ, որը հայտնեց երկրի խորհրդարանը: Թիմին

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՕՐԵՆՍԴԻՐ

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՔՎԵ ՀԱՆՁՆԵՑ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Նոյեմբերի 20-ին, Վրաստանի նոր կառավարության գործունեության եւ նախարարության թեկնածուների աշխատանքային ծրագրերի երկօրյա քննարկումից հետո, Վրաստանի խորհրդարանը 99 կողմ եւ 13 դեմ քվեներով վստահության քվե հանձնեց վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու գլխավորած կառավարությանը:

Նոր կառավարությունը կազմված է 20 անդամներից: Վարչապետի կողմից առաջադրվել եւ խորհրդարանի կողմից հաստատվել են պաշտպանության նախարար **Իրակլի Ալասանիան**, էներգետիկայի եւ բնական ռեսուրսների նախարար, փոխվարչապետ **Կախի Կալաձեն**, ներքին գործերի նախարար **Ալեքսանդր Ճիկաիձեն**, արդարադատու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԵՍ ՄՏԱԴԻՐ ՉԵՄ ԳՈՐԾԵԼ ԿՈՒԼԻՍՆԵՐԻ ԵՏԵՎԻՑ»

Վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու գլխավորած նոր կառավարության պաշտոնական հաստատումից հետո, Վրաստանի վարչապետի կարգավիճակում իր լիազորությունները վայր դրած Բիձինա Իվանիշվիլին, դրա նախօրեին, ֆեյսբուքյան իր էջում տարածեց հատուկ ուղերձ, որտեղ ներկայացվում են այն հանգամանքները, թե ինչու է հեռացել քաղաքականությունից եւ, որ ինքը մտադիր չէ երկիրը ղեկավարել «կուլիսների ետեւից»:

«Այս նամակով ցանկանում եմ պատասխանել միայն մեկ հարցին, որը ծագել է քաղաքականությունից իմ հեռանալու մասին հայտարարությունից հետո: Վրաց, եվրոպական եւ ամերիկյան հասարակության որոշակի հատվածի մոտ ծագել է հարց՝ մտադիր եմ արդյոք երկիրը ղեկավարել կուլիսների ետեւից:

Մինչ այդ էլ անհեթեթ շատ մեղադրանքներ են հնչել իմ հասցեին, երբ որոշեցի քաղաքականություն գալ: Մեղադրանքներ՝ սկսած Կրեմլի գործակալությունից եւ վերջացրած ընտրությունների համար սառնարանների բաժանմամբ: Էլ չեմ խոսում այլ անակնկալների մասին: Եվ այսօր, երբ հեռանում եմ քաղաքականությունից, ցանկանում եմ պատասխանել այս վերջին անհեթեթությանը, իբր մտադիր եմ կուլիսներից կառավարել երկիրը եւ ազդեցություն գործել իշխանության վրա: Հատկանշական է, երբ խոսում են ազդեցության մասին, դա նշվում է միայն բացասական ենթատեքստով: Իմ ապրելածեւի գլխավոր առանձնահատկությունը բացարձակ թափանցիկությունն է: Այսպիսին էի բիզնեսում, այդպիսին մնացի նաեւ քաղաքականությունում: Երբ 2003 թվականին իշխանության գլուխ եկավ նոր

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՎԻԼՆՅՈՒՍԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ Է ԳՆՈՒՄ ԼԱՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ»

«Վրաստանը Վիլնյուսի գագաթաժողով է գնում լավ արդյունքներով, քանզի տարվա ընթացքում Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրի ստորագրումը մնում է երկրի կառավարության գլխավոր ռազմավարությունը»,- Վազիանիի զորավարժարանում երկրի զինված ուժերի գլխավոր հրամանատարի կարգավիճակով առաջին անգամ զինվորների հետ հանդիպմանը հայտարարեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին:

Մենք անցկացրինք օրինակելի, եվրոպական ընտրություններ, ինչը հիանալի նախադրյալ է նրա համար, որ կանգնենք Եվրոպայի առաջ: Գտնում ենք, որ Վրաստանը Եվրոպայի անկապտելի մասն

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՊԱՇՏՊԱՆՎԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՊԱՐՓԱԿ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Եվրամիության 28 երկրների արտաքին գործերի եւ պաշտպանության նախարարները, նոյեմբերի 19-ին Բրյուսելում կայացած համատեղ նիստում, հանդես են եկել ԵՄ-ի խաղաղապահ գործողություններին Վրաստանի մասնակցության վերաբերյալ այդ երկրի հետ պարփակ համաձայնագրի ստորագրման օգտին:

ԵՄ-ի արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության բարձրաստիճան ներկայացուցիչ Քեթրին էշթոնը, որի նախագահությամբ է անցել նախարարների հանդիպումը, 2012 թվականի նոյեմբերին Վրաստան կատարած այցելության ժամանակ հանրապետության իշխանություններին առաջարկել էր բանակցություններ սկսել ԵՄ-ի՝ ճգնաժամերի կարգավորման գործողություններին Վրաստանի մասնակցության պարփակ համաձայնագրի շուրջ:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՇՔԱՆՇԱՆ՝ ԻԼԻԱ ԵՐԿՐՈՐԴԻՆ ԵՎ ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼՈՒՆ

Իրավաբանների համաշխարհային ասոցիացիայի պատվիրակությունը Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդին եւ Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլուն պարգեւատրել է Արդարության բարձրագույն շքանշանով:

Նշենք, որ վերոնշյալ կազմակերպությունը տարեկան այդ բարձրագույն շքանշանով պարգեւատրում է երկու հոգու, որից մեկը պարտադիր պետք է լինի հոգեւոր անձ: Այդ շքանշանով ժամանակին պարգեւատրվել են Հռոմի Պապ Հովհաննես Պողոս Երկրորդը եւ Մեծ Բրիտանիայի թագուհին:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Նոյեմբերի 20-ին Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Թենգիզ Շարմանաշվիլին եւ դեսպանորդ Գիորգի Սագանելիձեն հանդիպում են ունեցել Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահ Հերմինե Նաղդալյանի հետ:

Հերմինե Նաղդալյանը, ողջունելով հյուրերին խորհրդարանում, շնորհավորել է Վրաստանում անցկացված նախագահական ընտրությունների եւ նախագահի երդմնակալության առթիվ: Հայաստանի ԱԺ փոխխոսնակը հույս է հայտնել, որ հայ եւ վրաց ժողովուրդների ջերմ բարեկամական հարաբերությունները կշարունակվեն, եւ կսերտանան շփումները:

Թենգիզ Շարմանաշվիլին փաս-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻՆ ՍՏՈՐԱԳՐԵՑ ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼՈՒՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հաջողություններ եմ մաղթում երկրի զարգացման, յուրաքանչյուր քաղաքացու բարեկեցության համար»,- նշված է նախագահական ուղերձում:

Նշենք, որ նոյեմբերի 20-ին Վրաստանի խորհրդարանը վստահություն հայտնեց Իրակլի Ղարիբաշվիլու գլխավորությամբ նախարարների նոր կաբինետին եւ կառավարության ծրագրին: Վրաստանի կառավարության կազմը գրեթե չի փոփոխվել: Նախարարների թիմում միայն մեկն է փոխարինվել. ներքին գործերի նախարար է նշանակվել Ալեքսանդր Ճիկաիձեն, այդ պաշտոնը թափուր էր մնացել Ղարիբաշվիլու վարչապետ դառնալուց հետո:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԲԻՋԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԵՍ ՄՏԱԴԻՐ ՉԵՄ ԳՈՐԾԵԼ ԿՈՒԼԻՍՆԵՐԻ ԵՏԵՎԻՑ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

իշխանությունը, իրենց իսկ խնդրանքով խորհուրդներ էի տալիս: Իմ նախաձեռնությամբ ֆինանսավորում էի այն հիմնադրամը, որը 2,5 տարի հանձնում էր կառավարության եւ խորհրդարանի աշխատավարձը, որպեսզի երկիրը կարողանար դուրս գալ կոռուպցիայի ճահճից եւ ընթանար եվրոպական զարգացման ուղիով:

Պարեկային ոստիկանությանը օգնեցի պարեկային մեքենաների ձեռքբերման հարցում, սակայն երբեք չեմ աջակցել զենքի գնումների գործում: Օգնում էի բանակին, կառուցում զորանոցներ, զինվորների համար գնում էի համազգեստ եւ այդ հարցում էլ սկզբունքային դիրքորոշում ունեի՝ երբեք զենք չեմ գնել:

Երբեք չեմ մասնակցել որեւ նախարարի կամ վարչապետի նշանակմանը: Դրանից միշտ խուսափել եմ: Այսինքն, այն ժամանակ, երբ հանրային դեմք էի եւ իրականում «կուլիսային» հարաբերություններ ունեի իշխանության բարձր շրջանների հետ, փաստ է, որ չեմ փորձել «կուլիսային» կառավարում իրականացնել:

Քաղաքականությունում երկամյա գործունեության արդյունքում ձեւավորվեց խումբ, որը ինձ լավ գիտի: Թեպետ ոչ մեկը չի կարող ասել, որ ապրել ու աշխատել եմ երկակի չափորոշիչներով: Ընդհակառակը, հաճախ իմ թիմի անդամները «կուլիսներում» ինձ քննադատում էին քաղաքագետի համար ավելորդ անկեղծության եւ հանրայնության համար:

Իմ թիմի ցանկացած անդամ, ցանկացած նախարար առավելագույնս ազատ էր: Ես երբեք նրանց իմ կարծիքը չեմ պարտադրել, ես քննարկման եւ սթափ մտածելակերպի երկրպագուն եմ: Այսպիսին է իմ աշխատակարգը:

Այսուհետեւ ես կլինեմ հասարակության ակտիվ անդամ, իմ գործունեությունը կլինի լրիվությամբ թափանցիկ եւ, բնականաբար, կունենամ նաեւ որոշակի ազդեցություն, եւ ես այդ ազդեցությունը ոչ թե վնասակար եմ համարում, այլեւ կփորձեմ հնարավորինս մեծացնել, քանզի իշխանության վրա հասարակությունն ունի վիթխարի ազդեցություն, քանզի դա առաջին հերթին, քաղաքական համակարգի առողջության, այսինքն ժողովրդավարության ցուցանիշն է, քանզի այդ ազդեցությունը նախատեսում է ժողովրդի, հասարակության առջեւ իշխանության հաշվետվություն եւ փոխկապակցություն:

Ցանկանում եմ դիմել բոլորին. պետք չէ մնալ դրոշմակերպերին գերի: Պետք է հավատաք, որ մարդ կարող է ունենալ մեծ հարստություն եւ մեծ իշխանություն, սակայն նրա սիրտն ու մտածելակերպն այլ կերպ կգործեն, քանի որ նրա համար գոյություն ունեն շատ ավելի բարձր արժեքներ եւ դա ազատ հայրենիքի ազատ քաղաքացիությունն է: Այս երազանքի կատարման համար ծագեց ժամանակավորապես քաղաքականություն գալու անհրաժեշտությունը եւ հենց դրան էլ ծառայում է իմ հեռանալը»,- ասված է Բիձինա Իվանիշվիլու ուղերձում:

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՎԻԼՆՅՈՒՍԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ Է ԳՆՈՒՄ ԼԱՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

է: Մենք շեշտը դնում ենք առաջիկա ծրագրերի վրա, նախաստորագրումից մինչեւ ստորագրումն ընկած ժամանակահատվածի վրա»,- նշեց պետության ղեկավարը:

Անդրադառնալով Ուկրաինայի առջեւ ծագած Եվրամիությանը ասոցիացման հետ կապված հիմնախնդիրներին, Վրաստանի նախագահը կրկին ընդգծեց, որ վրաց հասարակայնությունը եւ քաղաքական շրջանները միասնական են նրանում, որ Վրաստանը եվրոպական ընտանիքի անդամ է:

«Մենք ընդգծում ենք, որ դա այն ընտրությունն է. որի շուրջ հասարակայնությունն ակտիվորեն միավորվում է: Հետեւաբար, ցանկացած բարդություններն ու մարտահրավերները, որոնք կարող են ծագել, մենք որպես երկրի ղեկավարություն, ինչպես նաեւ հասարակությունը, կհաղթահարենք համատեղ եւ, բնականաբար, մինչեւ տարեվերջ ասոցիացման մասին համաձայնագրի ստորագրման հետ կապված մեր ծրագիրը շարունակում է մնալ կառավարության գլխավոր ռազմավարությունը»,- ընդգծեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Նշենք, որ վրացական պատվիրակությունը կհամալրվի «մեկ գումարած երկու գումարած հինգ» ձեւաչափով: Վիլնյուսի գագաթաժողովը տեղի կունենա նոյեմբերի 28-29-ին:

ՕՐԵՆՍԴԻՐ

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՔՎԵ ՀԱՆՁՆԵՑ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյան նախարար **Թեա Ծուլուկիանին**, արտաքին գործերի նախարար **Մայա Փանջիկիձեն**, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար **Դավիթ Սերգեյենկոն**, ֆինանսների նախարար **Նոդար Խադուրին**, կրթության եւ գիտության նախարար **Թամար Սանիկիձեն**, գյուղատնտեսության նախարար **Շալվա Փիփիան**, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար **Գիորգի Կվիրիկաշվիլին**, քրեակատարողական հարցերի նախարար **Սոզար Սուբարին**, Վրաստանի բռնազավթված տարածքներից բռնագաղթված անձանց եւ փախստականների հարցերի նախարար **Դավիթ Դարախվելիձեն**, բնապահպանության նախարար **Խաթունա Գոգալաձեն**, մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարար **Գուրամ Օդիշարիան**, սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար **Լեւան Դիփիանին**, եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման հարցերի պետնախարար **Ալեքսի Պետրիաշվիլին**, եվրաինտեգրման հարցերի պետնախարար **Պաատա Զաքարեիշվիլին**, սփյուռքի հարցերի պետնախարար **Կոտե Սուրգուլաձեն**, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների հարցերի նախարար **Դավիթ Նարմանիան**:

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

ԲԱՐԱՔ ՕԲԱՄԱՅԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼՈՒՆ

ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման շնորհավորեց իր վրաց գործընկեր Գիորգի Մարգվելաշվիլուն եւ հայտարարեց, ինքը հույսով է, որ առաջիկայում երկու երկրների միջեւ հարաբերություններն է՛լ ավելի կխորանան: Այդ մասին ասված է Սպիտակ տան կողմից տարածած հայտարարության մեջ:

ԱՄՆ նախագահի խոսքերով, առաջին անգամ Վրաստանուում նախագահական իշխանությունը փոխանցվել է ժողովրդավարական ընտրությունների արդյունքում: «Դա հնարավոր դարձավ վերջին երկու տասնամյակի ընթացքում քաղաքական ճանաչված լիդերների, այդ թվում իրենց պաշտոններից հեռացող նախագահ Միխեիլ Սաակաշվիլու եւ վարչապետ Բիձինա Իվանիշվիլու ներդրած ավանդի, որոնք կենսական կարեւոր դեր կատարեցին Վրաստանում ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդման գործում»,- ասված է ԱՄՆ նախագահի հայտարարության մեջ:

Նշելով, որ Վրաստանը «էական առաջընթացի է հասնում ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման գործում» եւ «ընթանում է իր եվրատլանտյան միտումների իրականացման ուղիով», Օբաման երկրի բոլոր քաղաքական ուժերին կոչ է անում ջանքերը կենտրոնացնել ձեռք բերած նվաճումների շուրջ:



ՌՈՒՍԱՍՏԱՆ ԱՎԻԱԱՂԵՏ ԿԱԶԱՆՈՒՄ

Թաթարստանում նոյեմբերի 18-ը սգո օր է հայտարարվել՝ նախօրյակին Կազանի օդանավակայանում տեղի ունեցած ավիաաղետի զոհերի հիշատակին: Ողբերգությունը 50 մարդու կյանք է խլել:

Աղետի ենթարկված Boeing-ը մեկնել է Մոսկվայի Դոմոդեդովո օդանավակայանից եւ Կազանում վայրէջք կատարելիս ինքնաթիռը կորցրել է բարձրությունն ու բախվել գետնին: Այն այրվել է, պայթել է բենզաբաքերի բենզինը:

Օդանավում եղել է 44 ուղեւոր, այդ թվում երկու երեխա եւ անձնակազմի 6 անդամ: Ուղեւորների թվում են եղել Թաթարստանի նախագահի որդին՝ Իրեկ Մինիխանովը եւ Անվտանգության դաշնային ծառայության հանրապետական վարչության ղեկավար Ալեքսանդր Անտոնովը:

ՈՒԿՐԱԻՆԱ ԵՄ-Ի ՀԵՏ ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԿԱՍԵՑՎԵԼ Է

Ուկրաինայի կառավարությունը որոշում է ընդունել «կասեցնել մի կողմից՝ Ուկրաինայի, մյուս կողմից՝ Եվրամիության, Ատոմային էներգիայի եվրոպական հանրակցության եւ մասնակից պետությունների միջեւ ասոցիացման համաձայնագրի կնքմանը նախապատրաստվելու գործընթացը»:

Նոյեմբերի 21-ին Ուկրաինայի խորհրդարանի պատգամավորները չեն պաշտպանել արտասահմանում կալանավորների բուժմանը վերաբերող օրինագծերից ոչ մեկը. փաստաթուղթը պետք է արտասահման մեկնելու հնարավորություն տար դատապարտյալ նախկին վարչապետ Յուլյա Տիմոշենկոյին: «Տիմոշենկոյի խնդիրը» Եվրամիությունում որպես խոչընդոտ էին դիտում ԵՄ-ի հետ Ուկրաինայի ասոցիացման համաձայնագրի ստորագրման ճանապարհին, որը պետք է տեղի ունենար «Արեւելյան գործընկերության»՝ նոյեմբերի 28-29-ը Վիլնյուսում կայանալիք գագաթաժողովում:

ԱԴՐԲԵՋԱՆ ՆԱՎԹԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՎՈՒՄ Է

Ադրբեջանի պետական նավթային ընկերությունը (SOCAR) հաջորդ տարվանից դադարեցնելու է իր արդյունահանած նավթի մատակարարումն արտասահմանյան շուկաներ: Այս մասին հայտարարել է SOCAR-ի փոխնախագահ Դավիդ Մամեդովը: Նա հայտարարել է, որ SOCAR-ն արդեն դադարեցրել է համաշխարհային շուկաներ բենզինի արտահանումը, ինչը կապված է ներքին շուկայում բենզինի նկատմամբ պահանջարկի աճով եւ Ադրբեջանում բենզինի պակասով: SOCAR-ի՝ նավթի արտահանման դադարեցումը անխուսափելիորեն կբերի նաեւ Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղի կանգառին: Դավիդ Մամեդովը չի բացառել, որ հնարավոր է՝ հետագայում ընկերությունն այդ նավթամուղով նավթ գնի Ռուսաստանից: «Բոլոր դեպքերում, այսուհետեւ Ադրբեջանից նավթը արտահանվելու է միայն Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (ԲԹՋ) եւ Բաքու- Սուպսա խողովակաշարերով»,- ասել է նա:

ԹՈՒՐՔԻԱ ՕՋԱԼԱՆԻՆ ՆԵՐՈՒՄ ԿՇՆՈՐՀՎԻ՞

Այցով Թուրքիայի քրդաբնակ տարածաշրջանի կենտրոնում գտնվող իրաքյան Քուրդիստանի առաջնորդ Մասուդ Բարզանին մեկնաբանելով Դիարբեքիրում Թուրքիայի վարչապետ Ռեջեբ Թայիբ Էրդողանի հետ ունեցած իր հանդիպումները, իրաքցի քրդերի առաջնորդ Բարզանին ասել է, որ Էրդողանի հայտարարությունն այն մասին, թե «բանտերը կդատարակվեն» նշանակում է, որ եթե քրդերը հետ կանգնեն Սիրիայում ինքնավարություն ստեղծելու գաղափարից, ապա Թուրքիան Աբդուլլահ Օջալանի հետ ներում կշնորհի քաղաքական դրդապատճառներով բանտերում գտնվող քրդերին: Բարզանին ասել է նաեւ, որ «PYD-ն խախտել է խաղի կանոնները»՝ Սիրիայում ինքնավարության ճանապարհին հիմնադիր խորհուրդ ստեղծելով:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՃԻԿԱԻՃԵՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Վրաստանի խորհրդարանի կողմից հաստատված երկրի կառավարության նոր կազմում վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու փոխարեն երկրի ներքին գործերի նախարարությունը գլխավորելու է ոստիկանության գնդապետ Ալեքսանդր Ճիկաիձեն: 28-ամյա Ճիկաիձեն մինչ այդ գերատեսչությունում զբաղեցրել է տարբեր պաշտոններ, իսկ 2013 թվականի մարտից ղեկավարում էր Ներքին գործերի նախարարության Թբիլիսիի գլխավոր վարչությունը:

ԻՐԻՆԵ ԻՄԵՐԼԻՇՎԻԼԻՆ՝ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին նոյեմբերի 21-ին հրամանագիր է ստորագրել երկրում միակ կին-գեներալ Իրինե Իմերլիշվիլուն Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, նախագահի՝ ազգային անվտանգության հարցերով օգնական նշանակելու մասին:

Իրինե Իմերլիշվիլին արարողակարգի հարցերի ու կանոնների խորհրդարանական կոմիտեի նախագահն էր:

Նշենք, որ Իրինե Իմերլիշվիլին Անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնում փոխարինեց Գիգա Բոկերիային, որը նոյեմբերի 17-ի նախօրեին ներկայացրեց պաշտոնաթողության դիմում:

ՕԹԱՐ ՓԱՐՑԽԱԼԱՃԵՆ՝ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

Նոյեմբերի 21-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին ստորագրեց Օթար Փարցխալաձեին Վրաստանի գլխավոր դատախազ նշանակելու հրամանագիրը: «Դատախազության մասին» Վրաստանի օրենքի 9-րդ հոդվածի համաձայն, արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին վարչապետին դիմել էր Արչիլ Կբիլաշվիլուն գլխավոր դատախազի պաշտոնից ազատելու մասին դիմումով: Միաժամանակ, արդարադատության նախարարի այդ պաշտոնի համար վարչապետին ներկայացրել Օթար Փարցխալաձեի թեկնածությունը:

Մինչ այդ, Օթար Փարցխալաձեն գլխավորում էր Վրաստանի ֆինանսների նախարարության քննչական ծառայությունը: Այդ գերատեսչության ղեկավար է նշանակվել Լերի Բարնաբիշվիլին, որը մինչ այդ զբաղեցնում էր ծառայության ղեկավարի տեղակալի պաշտոնը:

ՎԱԽԹԱՆԳ ԿԱՊԱՆԱՃԵՆ՝ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

Վրաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ է նշանակվել գեներալ Վախթանգ Կապանաձեն: Միաժամանակ, Վրաստանի զինված ուժերի միացյալ շտաբը վերանվանվել է գլխավոր շտաբի:

Նշենք, որ մինչ այդ Վրաստանի զինված ուժերի միացյալ շտաբը գլխավորում էր գնդապետ Իրակլի Ջնելաձեն:

Նշանակումից առաջ բրիգադի գեներալ Վախթանգ Կապանաձեին շնորհվել էր գեներալ-մայորի կոչում:



ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՆՎԱԶԵԼ Է

Արժույթի միջազգային հիմնադրամի Վրաստանում գործազրկության մակարդակի բարձրացման մասին հաշվետվության ֆոնի վրա Վրաստանի վիճակագրական ծառայությունը հանդես է գալիս հակառակ հայտարարությամբ եւ նշում, որ զբաղվածության միտումը երկրում ավելացել է: Այդ մասին հայտարարեց Վրաստանի վիճակագրական ծառայության ղեկավար Զազա Ճելիձեն: Նրա խոսքերով, 2013 թվականի առաջին կիսամյակում նկատվել է գործարարության ակտիվություն, նախորդ տարվա համեմատությամբ 454 միավորով ավելացել է գրանցված բիզնես սուբյեկտների թիվը: Հիմնականում գրանցվել են արդյունաբերական ոլորտի եւ գյուղատնտեսության սուբյեկտներ:

ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՊԵՏԲՅՈՒՋԵՆ ՍՏԱՑԵԼ Է 54 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ

2013 թվականի անցած ինն ամիսների ընթացքում քրեական գործերով սահմանված տուգանքների, պետությանը հասցրած վնասի փոխհատուցման, գրավների եւ դատավարական պայմանավորվածությունների տեսքով, պետբյուջե է մուտք գործել 54.722.173 լարի: Վերոնշյալ տեղեկատվությունը հրապարակել է տեղեկատվության ազատ զարգացման ինստիտուտը (IDFI): Ինչ վերաբերում է դատավարական պայմանավորվածությունների կոնկրետ գումարին, ապա ինչպես IDFI-ին տեղեկացրին ազգային կատարողական բյուրոյում, այդ առումով առանձին հաշվարկ չի կատարվում:

Ազգային կատարողական բյուրոյի տվյալներով, 2009-2012 թվականներին դատավարական պայմանավորվածությունների հաշվին պետբյուջե է մուտք գործել. 2009 թվականին՝ 804.392 լարի, 2010 թվականին՝ 42.361.409, 2011 թվականին՝ 51.009.723 եւ 2012 թվականին՝ 38.627.586 լարի:

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՍԱՆԴՐԱ ՌՈՒԼՈՎՍԸ ԴԻՄԱՎՈՐԵՑ ԱՐՑՈՒՆՔՆԵՐՈՎ

Նոյեմբերի 17-ին, նոր նախագահի երդմնակալության արարողության օրը, Վրաստանի նախկին առաջին տիկին Սանդրա Ռուլովսը վրաց հասարակայնությանը հրաժեշտ տվեց տխուր նամակով, ուր նշում էր, որ ամուսնության քսաներորդ տարեդարձը դիմավորում է արցունքներով:

Այս նամակը նա հրապարակել է ֆեյսբուքյան իր էջում, եւ որին կցել այն լուսանկարը, ուր զույգը պատկերված է քսան տարի առաջ, կրկին նոյեմբերի 17-ին:

«Քսան տարի առաջ, նոյեմբերի 17-ին ես Միշային ասացի. «Այո, համաձայն եմ»: Հերթական մի օր, սովորական զգեստով ու ձեռքում մեկ վարդ:

Տասը տարի առաջ, 2003 թվականի նոյեմբերի 17-ին ես դիմեցի Վրաստանին. «Այո՛, ես դա կանեմ»: Հասարակ, երիտասարդ մի կին, բայց բացառիկ մի տղամարդու կողքին: Ուր էլ գնացի, ամեն տեղ վարդեր նվիրեցին:

Այսօր, 2013 թվականի նոյեմբերի 17-ին, մեր ամուսնության քսաներորդ տարեդարձի օրը, ոչ մի վարդ չկա, միայն փշեր ու արցունքներ են...

Մեր փոքր տղան նայում է ինձ եւ հարցնում. «Շուտ կվերադառնա՞նք տուն»: Դարձյալ հույսով ու վստահությամբ լի Նիկուշահին պատասխանում եմ. «Այո՛, մենք կվերադառնանք»... Սանդրա, Հոլանդիա», - գրում է Սանդրա Ռուլովսը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ՍԵՐԳԵՅԵՆԿՈ. «ԴԵՂԱՏՈՄՍԵՐԻ ՆԵՐԱՌՈՒՄԸ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՉԻ ՍՏԵՂԾԻ»

Նոյեմբերի 15-ին Վրաստանի առողջապահության նախարարը մասնակցեց սոցիալական սպասարկման գործակալության սերվիսկենտրոնի բացման արարողությանը:

«Մարդիկ, ովքեր օգտվում են համընդհանուր ապահովագրությունից, հնարավորություն կունենան ստանալու բժշկական համապատասխան փաստաթղթեր: Այս կենտրոնը չորրորդ գրասենյակն է, որոնք առօրյա հարյուրավոր մարդկանց են սպասարկում»,- հայտարարեց Դավիթ Սերգեյենկոն: Նրա խոսքերով, 2014 թվականից երկրորդ կարգի դեղորայքի համար կսահմանվեն դեղատոմսեր: «Քրոնիկական հիվանդություններ ունեցող մարդկանց կտրվեն երկարաժամկետ գործողության դեղատոմսեր: Դրանք ուժի մեջ կլինեն մեկ տարի»,- նշեց առողջապահության նախարարը:

Ինչպես հայտարարեց Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեյենկոն, դեղորայքի մի մասի հարցով դեղատոմսերի սահմանումը բնակչության համար լրացուցիչ հիմնախնդիրներ չի ստեղծի՝ ինչպես ժամանակի, այնպես էլ ֆինանսական եկամուտների եւ հավելյալ վճարումների հարցում:

«Մենք կես տարի կորցրեցինք վերոնշյալ ռիսկերը նվազագույնի հասցնելու համար: Գտնում եմ, որ այս նախագիծը նույնքան հաջող կլինի, ինչպես համընդհանուր առողջապահության նախագիծն էր»,- ասաց Դավիթ Սերգեյենկոն:

ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ

Թբիլիսիում սկսվել են բնակչության համընդհանուր մարդահամարի նախապատրաստական աշխատանքները:

Ինչպես հայտարարեցին տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Դավիթ Նարմանիան ու վիճակագրության ազգային գործակալության գործադիր տնօրենի պաշտոնակատար Թենգիզ Ցակվավան, այդ գործընթացը մայրաքաղաքում կշարունակվի երկու շաբաթ: «2014 թվականին բնակչության ընդհանուր մարդահամարի նախապատրաստական աշխատանքներն արդեն անց են կացվել Աջարիայում, Գուրիայում եւ Կախեթիում: Այսօր դրանք մեկնարկում են մայրաքաղաքում: Նախապատրաստական աշխատանքների շրջանակներում Թբիլիսիում կկազմվի շենքերի եւ դրանցում ապրող ընտանիքների ցուցակը: Դրա համար նախապատրաստվել են 800 գրանցողներ, որոնք 14 օրվա ընթացքում այդ աշխատանքը կիրականացնեն»,- հայտարարեց Դավիթ Նարմանիան:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾԸ ԱՐԳԵԼԱՓԱԿՎԵԼ Է

Վրաստանի կառավարությունն արգելափակել է իրավական սխալ հաշվարկների սահմանման հարցով հանձնաժողովի կազմավորման մասին օրինանախագիծը, եւ հրաժարվել այն ներկայացնել խորհրդարանի հաստատմանը: Արդարադատության նախարարության կողմից մշակված օրինանախագծի նպատակն էր հիմնել նախկին իշխանության օրոք դատական որոշումների վերանայման հանձնաժողով:

Կառավարությունը վերոնշյալ օրինանախագիծն արգելափակել է, քանի որ դրա հիմնադրույթների դեմ լուրջ բողոքներ են ծագել ուժային կառույցների կողմից:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տել է, որ նախագահական ընտրությունները անցել են խաղաղ ու ազատ մթնոլորտում՝ ապահովելով բնակչության 46 տոկոսի մասնակցությունը: Նա ընդգծել է, որ վրացիներն ու հայերը ունեն ընդհանուր անցյալ եւ, վստահաբար, բարեկամական հարաբերություններ՝ ապագայում:

Աժ փոխնախագահը տեղեկացրել է Վրաստանի խորհրդարանի առաջին փոխնախագահ Մանանա Կոբախիձեի հետ առաջիկայում կայանալիք հանդիպման մասին, ինչպես նաեւ խոսել հայ եւ վրացի կին խորհրդարանականների հանդիպումներ կազմակերպելու անհրաժեշտության մասին, որպեսզի քննարկեն տարածաշրջանի կանանց դիքորոշումները տարբեր ակտուալ հարցերի վերաբերյալ:

Զրույցի ընթացքում քննարկվել են առաջիկայում նախատեսվող հանդիպումներն ու համատեղ ծրագրերը, երկու խորհրդարաններում բարեկամական խմբերի համագործակցությանը, կրթությանը, մշակույթին, տարածաշրջանային խնդիրներին վերաբերող հարցեր:

ԳՈՐԾԱԴԻՐ

ՀԶՈՐ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կառավարության տնտեսական քաղաքականության գլխավոր նպատակը երկրի բնակչության բարօրության մակարդակի բարձրացումն է, ինչին կարելի է հասնել տնտեսական կայուն զարգացման պայմաններում եւ բոլոր քաղաքացիները կօգտվեն տնտեսական աճով պայմանավորված օգուտից եւ, միաժամանակ, կապահովվի տնտեսական աճի գործընթացում բնակչության համընդհանուր ներգրավումը:

«Մակրոտնտեսական կայունության ապահովումն ու պահպանումը տնտեսական աճի եւ ծրագրված միջոցառումների արդյունավետ իրականացման նախապայմանն է, որն անհրաժեշտ է տնտեսական քաղաքականության համար: Վրաստանի նոր կառավարության տնտեսական քաղաքականությունը հիմնված է շուկայական ազատ էկոնոմիկայի սկզբունքների վրա, որոնք նախատեսում են սեփականության իրավունքի պաշտպանություն, շուկայում ազատ մրցակցություն եւ մասնավոր հատվածի ազատություն փոքր, արդյունավետ եւ թափանցիկ կառավարության պայմաններում: Տնտեսական արդյունավետ քաղաքականության իրականացման համար Վրաստանի կառավարության համար կարեւոր նշանակություն ունի մասնավոր հատվածի համար համապատասխան միջավայրի ստեղծումը, ինչը տնտեսական աճի եւ զարգացման առաջընթաց ուժն է, որը, իր հերթին, կնպաստի մրցունակության աճին եւ կապահովի առանձին ոլորտների արդյունավետ գործունեությունը»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Վարչապետի թեկնածուի խոսքերով, կառավարության ծրագրով կանխագծված տնտեսական քաղաքականությունն ուղղված է արտադրական եւ ներդրումային միջավայրի բարելավմանը, գործարարության, փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը այն հաշվով, որ էկոնոմիկայում վերջիններիս դերը զգալիորեն բարձրացվի: «Մենք նաեւ ծրագրում ենք մասնավոր հատվածի ֆինանսական մատչելիության բարելավում, ֆինանսական նոր լծակների զարգացման ուղիով, երկրի գերակայությունների խելամիտ օգտագործմամբ Վրաստանի էկոնոմիկայի տարածաշրջանային եւ գլոբալ մրցունակության բարելավում, առեւտրատնտեսական արտաքին կապերի առաջիկա զարգացում, ինչը կապահովի վրացական արտադրանքի եւ սպասարկումների արտահանման աճը, անմիջական արտասահմանյան ներդրումների գործարկում, ուղղված այն արտադրանքի թողարկմանը, որը ունի բարձր լրացուցիչ արժեք եւ կողմնորոշված է արտահանման ուղղությամբ, ինչը զբաղվածության մակարդակի բարձրացման եւ արդի ու նորարարական տեխնոլոգիաների ներդրման աղբյուր է, նաեւ սպասարկման ոլորտի զարգացում, բնակչության լայն զանգվածների համար նոր աշխատատեղերի ստեղծում եւ տնտեսական զարգացման գործընթացում բնակչության լայն ընդգրկում»,- հայտարարեց վարչապետի թեկնածուն: Միաժամանակ, նա նշեց, որ իր գլխավորած կառավարությունը մտադիր է զարգացնել կայուն առեւտրատնտեսական հարաբերություններ հարեւան բոլոր երկրների, այդ թվում նաեւ Ռուսաստանի հետ, ինչը կնպաստի արտահանման եւ ներդրումային հոսքի ավելացմանը:

Բացի այդ, կառավարական ծրագրի համաձայն, կակտիվացվեն առեւտրական եւ ներդրումային հարաբերությունների շուրջ բանակցությունները ԱՄՆ-ի հետ, որի նպատակն է, վերջին հաշվով, ազատ առեւտրի մասին պայմանագրի ձեւավորումը: «Հաջողությամբ ավարտվեցին խոր եւ ազատ առեւտրի մասին Վրաստանի եւ Եվրամիության միջեւ բանակցությունները, ինչը, իր հերթին, հանդիսանում է ասոցիացման մասին պայմանագրի անկապտելի մասը: Վրաստանի կառավարության նպատակն է Եվրամիության շուկային ինտեգրումը»,- ընդգծեց Իրակլի Ղարիբաշվիլին:

«Ելնելով երկրի աշխարհագրական նպաստավոր դիրքից, Վրաստանի կառավարության նպատակն է հիմնել տրանսպորտային միասնական համակարգ, տարանցիկության ներուժի առավելագույն օգտագործման եւ տարածաշրջանում առեւտրական ու միջազգային բեռնափոխադրումների հարցում ստանձնած պարտավորության կատարման համար: Տարանցիկության միջանցքի մրցունակության բարձրացման նպատակով կխորացվի միջազգային տրանսպորտային համակարգում ինտեգրման մակարդակը»,- նշեց նա:

Խորհրդարանի հաստատման ներկայացված կառավարական ծրագրի համաձայն, նոր կառավարության արտաքին քաղաքական առաջնահերթությունները շարունակում են մնալ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Եվրամիության եւ ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունները: «Վրաստանը կփորձի աստիճանաբար հաղթահարել Ռուսաստանի հետ հարաբերություններում առկա ճգնաժամը երկրի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության պաշտպանության ուղիով: Կպահպանվի վրաց-ռուսական երկխոսության ձեւաչափը, ինչը հնարավորության սահմաններում պետք է նպաստի առեւտրատնտեսական, տրանսպորտային եւ հումանիտար հարաբերությունների զարգացմանը, Վրաստանի շահերից ելնելով առկա հիմնախնդիրների աստիճանական լուծմանը»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին՝ հավելելով, որ Վրաստանը կշարունակի մասնակցությունը Ժնեւի բանակցություններին, ուղղված ռուս-վրացական հակամարտության կարգավորմանը, ընդ որում Վրաստանը «մտադիր չէ Աբխազիայի եւ Ցխինվալիի տարածաշրջանի կարգավիճակի հարցում Ռուսաստանին զիջումներ անել»:

Ներկայացված ծրագրի համաձայն, Վրաստանի նոր կառավարությունը պատրաստ է ժամանակին ավարտել Եվրամիության հետ ասոցիացման պայմանագրի կիրարկման համար անհրաժեշտ ընթացակարգերը: «Միաժամանակ կծագի այն բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը, որոնք կարեւոր նշանակություն ունեն Եվրամիությանը հետագա ինտեգրման տեսանկյունից»,- ընդգծեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Վարչապետի թեկնածուն հերթական անգամ ընդգծեց ՆԱՏՕ-ին ինտեգրվելու երկրի ակտիվ գործունեության պատրաստակամությունը: «Վրաստանը կշարունակի արդյունավետորեն իրականացնել ամենամյա ազգային ծրագիրը եւ ՆԱՏՕ-Վրաստան հանձնաժողովի շրջանակներում ծրագրված հանդիպումների անցկացումը: Ինտեգրման ուղու վրա նշանակալի առաջընթացին կնպաստի Վրաստանում ժողովրդավարական սկզբունքների հետագա ամրապնդումը»,- ասաց նա:

Իրակլի Ղարիբաշվիլին կրկին անգամ հավաստեց, որ նոր կառավարության գլխավոր դաշնակիցը մնում է Ամերիկայի Միացյալ Նահանգները: Մենք լուրջ ջանքեր կգործադրենք ԱՄՆ-ի հետ բարձր մակարդակի երկխոսության խորացման համար»,- նշեց Ղարիբաշվիլին:

Նա խոստացավ Վրաստանի միավորումն իրականացնել խաղաղ ուղիով եւ աբխազներին ու օսերին կոչ արեց համատեղ կառուցել միասնական Վրաստան: «Չնայած հակամարտությունների կարգավորման հարցում առկա սկզբունքային դիրքորոշումների տարբերությանը, վրաց, աբխազ եւ օս հասարակությունը համատեղ պետք է ստանձնի պատասխանատվություն, ինչպես տարածաշրջանի, այնպես էլ ապագա սերունդների անվտանգության համար: Անհրաժեշտ է սկսել բանակցություններ անվտանգության երաշխիքների մասին, որի մեխանիզմները մշակվելու են ԵԱՀԿ-ի կամ ՄԱԿ-ի ձեւաչափով»,- նշեց վարչապետի թեկնածուն:

Ղարիբաշվիլու խոսքերով, նոր կառավարությունը մտադիր է բացել ժողովրդական դիվանագիտության, տնտեսական վերականգնման եւ բիզնես նախագծերի ճանապարհը: Կխրախուսվեն ընտանեկան, ազգակցական եւ անձնական հարաբերությունները, որոնք պահպանվել են «բաժանող գծերի՝ Աբխազիայի եւ Վրաստանի մյուս մասի, այսպես կոչված, Հարավային Օսեթիայի եւ Վրաստանի մյուս մասի վարչական սահմանի երկու կողմերում: «Բարեկամ երկրների եւ միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ նշանակալիորեն կընդլայնվի ոչ կառավարական հատվածի այն նախագծերի ծավալը, որոնք կնպաստեն քաղաքական փորձագետների երկխոսությանը եւ գործարարների, լրագրողների, ֆերմերների, բնապահպանների, բուժաշխատողների «շահերի խմբերի» հիմնմանը»,- ընդգծեց վարչապետի թեկնածուն:

Խորհրդարանի քննարկմանը նոր կառավարության գործունեության ծրագիրը ներկայացնելիս, վարչապետի թեկնածու Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ երկրի համար անհրաժեշտություն է տարբեր երկրների հետ այցեգրային պայմանակարգի վերանայումը, թեպետ դա չի նշանակում, որ նոր կառավարությունը կհակադրվի ներդրումային նպաստավոր միջավայրի ստեղծմանը:

Ներկայացնելով կառավարության գործունեության ծրագիրը, Վրաստանի վարչապետի թեկնածու Իրակլի Ղարիբաշվիլին ասաց, որ երկրի տնտեսական վիճակն աղետալի չի համարում: Նրա խոսքերով, կառավարության տնտեսական թիմը լավատեսորեն է տրամադրված եւ վստահ է, որ բոլոր հարցերը կկարգավորվեն: «Այսօր մեզ մոտ տնտեսական որոշակի անկում է, սակայն Արժույթի միջազգային հիմնադրամի ներկայացուցիչները հետաքրքիր մեկնաբանություն ներկայացրին: Նրանց գնահատմամբ, վերջին ամիսներին տեղի է ունեցել էկոնոմիկայի առաջընթաց, հետեւաբար մեր գործերն այնքան էլ աղետալի չեն»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին՝ հավելելով, որ երկրում քաղաքական անկայուն իրավիճակ էր. «նման պայմաններում կառավարությունն ինչպես էր երկիր ներբերելու ներդրողների: Ինչպես համոզել ներդրողին, երբ երկրում երկիշխանություն է, դա անհնարին է»,- ասաց նա: Նրա հավաստմամբ, երկրի էկոնոմիկայի առողջացման գործընթացն սկսվել է, սակայն դրա շարունակման համար անհրաժեշտ է ջանադիր աշխատանք:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՍԿՍՎԵՑ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ

Սահմանադրությունում փոփոխությունների կատարման ընթացակարգը բարդացվում է: Այդ հանգամանքը նշանակալից է նրանով, եթե կառավարող կոալիցիան առանց այդ էլ հիմնախնդիրներ ուներ օրենսդիր մարմնում, սահմանադրական մեծամասնությունը կազմելու հարցում, ապա դա ներկա պայմաններում է՛լ ավելի է բարդանում: Թեպետ նախագահի երդմնակալման արարողությունից հետո անմիջապես հաջորդ օրը սկսված խորհրդարանական խմբակցությունների միջեւ խմբավորումների կազմավորումը հնարավոր է կարգավորի վերոնշյալ հիմնախնդիրը: Իմիջիայլոց, դրա վկայություններից մեկը «ազգային շարժում» խմբակցությունից պատգամավոր Դավիթ Բեժուաշվիլու հեռանալն է: Նույնը կանխագուշակում են նաեւ նույն թիմի պատգամավոր Կոբա Նաղոփիա վերաբերյալ:

Ինչպես արդեն հաղորդել ենք, նորընտիր նախագահի երդմնակալման պահից ուժի մեջ է մտել 2010 թվականին ընդունված սահմանադրական մոդելը, ըստ որի՝ սահմանադրական փոփոխությունների կատարման համար երկու երրորդի փոխարեն նոր մոդելով կպահանջվի խորհրդարանի ցուցակային կազմի երեք քառորդի, այսինքն՝ 113 պատգամավորի աջակցությունը:

Քվորումի ավելացման հետ միասին բարդացվում է նաեւ սահմանադրական նախագծերի հաստատման ընթացակարգը: Եթե մինչ այդ սահմանադրական փոփոխությունների նախագիծը հնարավոր էր քննարկել եւ հաստատել երկու շաբաթվա ընթացքում, ապա ներկայումս այդ ժամկետը հասցված է երկու միմյանց հաջորդող նստաշրջանների, այսինքն՝ երեք ամսվա ընթացքում:

Կառավարող կոալիցիան փորձեց ուժի մեջ թողնել Սահմանադրության վերանայման ներկայումս գործող ընթացակարգը եւ խորհրդարանին ներկայացրեց համապատասխան օրինանախագիծը, թեպետ, «Ազգային շարժման» կտրական բացասական դիրքորոշման պատճառով նախագծի անցկացումը չիրականացվեց, քանի որ կառավարող կոալիցիան խորհրդարանում չունի անհրաժեշտ 100 պատգամավորի քվեն, ինչը մինչեւ օրս գործող նորմի համաձայն, անհրաժեշտ է սահմանադրական փոփոխությունն ընդունելու համար:

Նոր ընթացակարգի ուժի մեջ մտնելուն զուգընթաց, խորհրդարանում սկսվել է խմբակցությունների միջեւ ուժերի ակտիվ վերաբաշխումը:

Ինչպես վերեւում նշեցինք, նոյեմբերի 19-ին «Միասնական ազգային շարժման» խմբակցությունը թողեց Թեթրիծղարոյի մեծամասնական պատգամավոր Դավիթ Բեժուաշվիլին: Բեժուաշվիլու հայտարարությամբ, ինքը պաշտպանում էր նախորդ իշխանության տնտեսական բարեփոխումները, թեպետ երբեք չի կատարել կուսակցական գործունեություն: Դավիթ Բեժուաշվիլին իր հայտարարության համաձայն, խորհրդարանի գործունեությունը կշարունակի անկախ պատգամավորի կարգավիճակով:

Մոտ օրերս նման հայտարարությամբ հնարավոր է հանդես գա եւս մի պատգամավոր, Բոլնիսիի մեծամասնական պատգամավոր Կոբա Նողոփիան: Միաժամանակ, լուրեր են տարածվում այն մասին, որ իր շարքերը կարգավորելու է նաեւ «Վրացական երազանքը»: Համենայնդեպս, արդեն հաստատվել է, որ քննարկվում է մեծամասնության շարքերից Վանի մեծամասնական պատգամավոր Դավիթ Լորթքիփանիձեի դուրս գալու հարցը: Խորհրդարանական մեծամասնության լիդեր Դավիթ Սագանելիձեի հայտարարությամբ, խմբակցության նիստում իրոք կքննարկվի Դավիթ Լորթքիփանիձեի հետ կապված հարցը: «Ես որպես շտաբի ղեկավար, դիտողություններ ներկայացրեցին այն կապակցությամբ, որ նա ակտիվորեն միջամտում է Վանի մունիցիպալիտետի ինքնակառավարման գործունեությունում, ինչը պատգամավորի կողմից ճիշտ ու արդարացի վարմունք չէ»,- հայտարարեց Դավիթ Սագանելիձեն:

Վերջին հաշվով, թե ինչպես կավարտվի խորհրդարանում ուժերի բաշխումը, ասելը դժվար է: Այդ թեմայով մեկնաբանություններ էլ չեն արվում, քանի որ, ինչպես նշում են պատգամավորները, գործընթացը նոր է սկսվել եւ դրա համար ժամանակ է անհրաժեշտ: Թեպետ հարկ է նշել նաեւ, որ անցյալ տարվա խորհրդարանական ընտրություններից հետո փորձագետների ճնշող մեծամասնությունը համակարծիք էր նրանում, որ խորհրդարանում ուժերի իրական վերաբաշխումը կմեկնարկի նախագահական ընտրություններից հետո:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ